

1705


Էլբրեյտեր Ն. Գ.  
Երկու սոցաճար

ԸՌ ԿԻՒԻՍ 1882

891-715

Կ-92

1280



ф. Суму ~~795~~  
 Министр  
 Улу Гире (Сургууль)  
 Хуучин Гуримсүх  
 1280 уулд (13)  
 19 1913 онд

246

Эрхүү ордонд  
 10 номо

номо Хуучин Гуримсүх  
 Хуучин Гуримсүх

2003

891.2153

1-92

1/2

# ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Գ Ո Ր Ծ

Ն. Գ. ՎՈՒՉԵՏԻՉԻ



ՏՓԻՍ

ՏՊԱՐԱՆ ԵՌԿՆԵՆԵՍ ՄՈՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

1882

100 200

100  
32976

9

*[Faint, illegible handwritten text on the left page]*

## ՓՈՒՔՐԻՆԻ ԿԱՐԴԱՅՈՂՆԵՐ.

Տարեմուտի գիշերը, որի առաւօտը պէտք է լուսանայ Նոր-տարին, նոյնպէս և Ջրօրհնէքից առաջ՝ Ռուսները իրանց երեխաներին ուրախացնելու համար մի աննեակի մէջ տեղը դնում են մի մեծ ծառի ճիւղ: Այդ ճիւղը զարդարում են զանազան շաքարեղէններով, վերան տնկում են վառած մեղրամոմեր և կախ են անում փոքրիկ գոյնզգոյն լամպարներ:

Հաւաքւում են ազգական, բարեկամ ու ծանօթ երեխաներ: Այդ հանդէսը կառավարող մարդը ամէն մի երեխայի համար մի մի ընծայ է պատրաստում: Բացի այդ բոլոր ընծաներից՝ նա էլի պատրաստում է մէկ ուրիշ մեծ ու թանկագին ընծայ:

Յետոյ, երբ ամէնքը հաւաքուած են լինում, նա բոլոր երեխաներին մի բան է հարցնում, կամ մի հանելուկ է ասում: Ո՛վ կարողանում է այն հարցմունքին ուղիղ պատասխան տալ, կամ լուծում է հանելուկը՝ այն մեծ ու թանկագին ընծանն է ստանում:

Հայոց շատ քաղաքներում ու գիւղերում էլ մի շատ հին սովորութիւն կայ, որ նման է Ռուսների սովորութեանը:

Հարսանիքի ժամանակ նորափեսայի տանը մի մեծ փայտի վերայ մանր ճիւղոսներ են ցցում ծառի ճիւղերի նմանութեամբ: Յետոյ նոցանից կախ են անում զանազան թաց ու չոր միրգ, չիր ու չամիչ, տանձ ու խնձոր, ընկոյզ ու շաքարեղէն. իսկ ճիւղերի ծայրերից փոքրիկ փնջեր են կախ անում: Ճիւղերի վերայ էլ տնկում են վառած մոմեր և այդպէս զարդարած դնում են հիւրերի մէջ տեղը:

Մի քանի տեղև Հայեր դորան ասում են «ԽՆԳՈՒՄ»: Երբ հիւրերը նորափեսայի անկից գնում են դէպի նորահարսի տունը, խաչեղջայրը Խնդումը բռնում է ձեռքին և դորանով առաջնորդում է հարսանիքաւորներին և լուսաւորում է նոցա ճանապարհը:

Բայց որովհետև ուրիշ տեղերի Հայեր այդ խնդումին զանազան անուններ են տալիս, այս պատճառով ամէնքին հասկանալի լինելու համար՝ մենք դորան անուանում ենք «ՏՕՆԱԾԱՌ»:

Թարգմանող.

## ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ

Ա.

Մի մեծ երեք-յարկանի տուն կար: Այս տան երկրորդ յարկում դրուած էր մի տօնածառ. և նորա վերայ վառուած էին անթիւ մեղրամուներ: Առսամուաների մեծ ու բարձր ապակիների միջովը տօնածառը պարզ երևում էր փողոցի կողմից. և բազմաթիւ անցաւորներ հաւաքուել նայում էին այն անթիւ ճրագներին, որոնք փայլուն լոյս էին ձգել դիմացի տան լայն ու կարով ծեփած մայթի (տրոտուար) վերայ:

Այս ամբոխի առաջը հին ու մաշուած շուրերով կանգնած էր մի ութ-տարեկան երեխայ և հետաքրքրութեամբ նայում էր լուսաւորուած պատուհաններին: Այս բարձրանում էր ոտքի մասների վերայ և աշխատում էր տեսնել ու իմանալ, թէ մարդիկ ինչ էին անում այնտեղ: Այս հագած ունէր մի բարակ փոքրիկ ամառուայ վերարկու և մի հին, քրքրուած գլխարկ,

որի բռնատեղը պատուաւում ու ջարդուած էր: Չեռքին բռնած ունէր մի մեծ կտոր փռան սև հաց, որ փաթաթուած էր մի գրուած թղթի կտորի մէջ: Արեխայի փոքրիկ, գունաթափ ու բարի դէմքը փայլում էր ուրախութիւնից. իսկ կրակոտ ու վառվռուն աչիկները անհանգստաբար ներս էին նայում լուսամուտներից:

Արբեմն անդգոյշ անցաւորները դիպչում էին խեղճ երեխային ու ցած էին ձգում մայթից և այն ժամանակը նա աչքերը լուսամուտներից չհեռացնելով՝ սեղմում էր ամբոխի վերայ և աշխատում էր, որ՝ ինչքան կարելի է, աւելի բարձր կանգնի: Արբ յարմար ժամանակ դտաւ, նա մինչ անգամ բարձրացաւ մայթի փոքրիկ սիւնի վերայ. բայց դռնապանը կոպտութեամբ քաշեց նորա ձեռքից, ցած ձգեց, և՛ ոչ տարաւ, ոչ բերեց՝ իւր ձեռքի մեծ աւելը բարձրացրեց ու ահ տուեց նորան...:

Հեշտութեամբ չէր կարելի տեսնել այն ամէնը, ինչ որ լինում էր մեղրամոմերով լուսաւորուած դահլիճումը: Մոմերի բոցերի միջովք միայն երեխաների ստուերներն էին երևում, և լուում էր նուազարանների ձայնը, որ ածում էին մի ուրախ երգ. այնպէս որ մայթի վերայ կանգնած տղան հոգին տալիս էր պար գալու

համար: Ի՛նչպէս ցանկանում էր նա, որ լինէր այնտեղ՝ այն լուսամուտների միջովք երևացող երեխաների մէջ: Ի՛նչքան բաղտաւոր կը լինէր, եթէ ինքն էլ ունենար մի այնպիսի գեղեցիկ տօնածառ:— «Ի՛նչքան գեղեցիկ խաղալիկներ, քաղցրեղէն, մրգեր, ոսկէ ու արծաթէ ընկոյզներ, նկարներ և լաւ լաւ գրքոյկներ կը լինեն նորա վերայ», մտածում էր երեխան:

Խեղճ երեխան այս ամէնը ջրօրհնէքից առաջ շատ էր տեսել վաճառանոցների ու խանութների առաջըր՝ հէնց այնպիսի մեծ ապակիների ետեւը, ինչպէս էին այն ապակիները, որոնց ետեւը վառւում պէծպէծին էր տալիս տօնածառը...: Արկար ժամանակ երեխան կանգնած էր փողոցումը և, զգալով, որ ձեռքումը հաց ունէր բռնած՝ միտքը բերեց, որ մայրը իրան ուղարկել էր ընթրիքի համար հաց առնելու և ասել էր թէ. «Շնտ արի, որ քեզ ենք սպասում»...: Արեխան ծանր «ախ» քաշեց ու վազեց դէպի տուն. և վազելիս էլ շուտ շուտ յետ էր նայում՝ այն մեծ տան լուսաւորուած ապակիներին, որ իւր մեծութեամբը և շքեղութեամբը մի պալատ էր երևում նորա աչքումը...:

Բ.

Իսկ երկրորդ յարկի մեծ դահլիճում, տօնածառի վերայ դեռ ևս վառուում էին մոմերը և ներսը պայծառ լոյս էին թափում այն երեսանների կարմրած թշերի վերայ, որոնք հազել էին հանդիսաւոր օրուայ գոյնզգոյն շորեր և մեծ բազմութեամբ ու աղմուկով անհանգիստ պտրտուում էին բարձր տօնածառի շուրջը, որ իրանցից աւելի լաւ էր զուգուած ու զարդարուած:

Արեխանների չորս կողմը պատել էին մաքուր հագնուած աղամարդիկ և կոկուած ու պճնուած կանայք, որոնք այդ երեսանների ծրնողները, ազգականները և մերձաւոր ծանօթներն էին...: Ամէնքն էլ հետաքրքրութեամբ աչքները ձգել էին տօնածառի վերայ և ցանկանում էին իմանալ, թէ ինչպէս գլուխ դուրս կը տանեն մանուկները և նոցանից ո՞վ կը գերազանցէ միւսներին ու կը լուծէ այն հանելուկը, որ այն գիշերը այդ բոլոր պատրաստութիւններ տեսնողը առաջարկել է նոցա:— Իսկ հանելուկը լուծողի համար նշանակուած էր մի շատ լաւ ընծայ, այսինքն մի մեծ ձի՝ կանգնած շարժուող անիւների վերայ, որ իւր վերայ նստողին

կարող էր տանել ինչպէս մի իսկական կենդանի ձի և առանց ուրիշի օգնութեան կարող էր վազել ո՛չ միայն կոկ ու փայլուն տախտակամածի վերայ, այլ և ծառուղիներովն ու փողոցներովը:

Մի առանձին բարձր տեղ, բոլոր խաղալիկներից բարձր կանգնած էր այս ձին և իւր գեղեցիկ տեսքով դարձնում էր իւր վերայ այն բոլոր մանուկների ուշադրութիւնը, որոնք դիզուած էին իրար վերայ նորա առաջը և սաստիկ ցանկանում էին հանելուկը լուծել:

Այս հանելուկը շատ հասարակ հանելուկ էր: Ահա թէ ինչ էին հարցնում. «Այս դահլիճումը մենք քանի՞ տօնածառ ենք տեսնում»:— «Մէկ տօնածառ, մէկ, մէկ տօնածառ», աղաղակում էին մանուկները՝ իրար առաջն ընկնելով: Բայց նոցանից ո՛չ մէկը չկարողացաւ լուծել...: Գոնէ այդպէս էր ասում տօնածառ պատրաստողը. և գեղեցիկ ձին դեռ ևս կանգնած էր իւր տեղը և անհամբերութեամբ սպասում էր այն տիրիջը, որին ինքը վերջապէս պէտք է պատկանէր...:

Տօնածառի վերայ փառուող մոմերը հանգան իրար ետեւից, բոլոր խաղալիկները վեր էին առել. մանուկները սկսեցին պար գալ, խաղալ և երգում էին զանազան խմբական երգեր: Իսկ

ձին դեռ էլի անշարժ կանգնած էր, որովհետև ոչոք չկարողացաւ լուծել հանելուկը և այնպէս էլ չլուծուած մնաց ամբողջ գիշերը: Ի՞նչ պէտք է անէին. պէտք է մնար ձին առանց մէկին պատկանելու մինչև հետևեալ տարին...:



Գ.

Մի խուլ ու մութ նեղ փողոցում, հնութիւնից ծռուած՝ կանգնած էր մի փայտաշէն տնակ: Աորա հին ու ճղքճրղքոտուած դռան մէջ կար մի փոքրիկ դռնակ, որ միշտ փակուած էր լինում և միայն այն ժամանակն էր բացուում, երբ դրսեից բաղխում էր մի խեղճ մարդ, որ հազած ունէր մի քրքրուած ու իւրոտուած վերնազգեստ փայլուն կոճակներով. երբեմն էլ մի բաւական մանկահաս կին՝ որ հազած ունէր չէթէ շրջազգեստ և գլխին փաթաթած ունէր մի հասարակ գլխափաթեթ:

Այն գիշերը, երբ մեծ երեք—յարկանի տանը դեռ ևս վառուում էր տօնածառը, այս դռնակը բաղխեց մի տղայ, որ հազիւ էր երևում այն մութ ու նեղ փողոցի խաւար անկիւնում: Հէնց որ դռնակը բաղխեցին՝ իսկոյն բա-

կումը լսուեցաւ մի սոնաճայն, և նորա հետ էլ մի կոշտ ու խուպոտ ձայն, որ հարցնում էր. «Ո՞վ է»:—Այլ պատասխանի հետ դռնակը ճրճրուարով բացուեցաւ ու տղան ներս մտաւ: Արբնա մտաւ սենեակը, այնտեղ փոքրիկ լամպարի լուսով պարզ երևում էր, որ սա հէնց այն տղան էր, որ փողոցի կողմից այնպէս սիրով նայում ու զուարճանում էր տօնածառովը:

—Ո՞րտեղ էիր այսքան ժամանակ, Ա՛րտաշ, հարցրեց խստութեամբ փայլուն կոճակաւոր վերնազգեստով մարդը:

Տղան չկարողացաւ պատասխանել, բայց վերջապէս ասաց.

—Մի մեծ տան մէջ տօնածառ կար, ես էլ փողոցից նայում էի:

Այս ամենեին սուտ խօսել չգիտէր. և հիմա էլ չէր ուզում սուտ խօսել:

—Իսկ մենք այստեղ սպասում ենք քեզ:

Ապա մէկ էլ դու այսքան ժամանակ դուրսը ման արի՝ տէս թէ ի՞նչ կ'անեմ քեզ, ասաց հայրը, բարկանալով նորա վերայ: Յետոյ առաւ որդու ձեռքից հացը, տուեց իւր կնոջը և նրատեց սեղանի մօտ, որի վերայ սփռոց էր ձգուած և պատրաստուած էր ընթրիքը...:

Արտաշը հօր վճռողական խօսքերը լսե-

լով՝ խոր մտածմունքի մէջ ընկաւ և մի քանի  
 րոպէ նստած՝ ամենևին չէր մօտենում կերակրին:  
 Նորա սիրտը տխրեցաւ. որովհետև տեսնում  
 էր, որ հայրը զգուժ է իրան իւր ուրախու-  
 թիւնից. և մէկ էլ այն պատճառով, որ հօր  
 վճիռը լսելուց յետոյ նա էլ չէր կարող գիշեր-  
 ները կանգնել այն տների լուսամուտների ա-  
 ուջը, որոնց մէջ տօնածառեր կը լինեն վա-  
 ուուելիս: Խեղճը տրամուխեամբ նայում էր հօրը  
 և մտածում էր երկրորդ յարկի այն հիանալի  
 տօնածառի վերայ, որ պայծառ փափկելով՝ վառ-  
 ւում էր մեծ ապակիների մէջը . . . :

«Մայրիկիս կը խնդրեմ, որ ինձ համար էլ  
 մի փոքրիկ տօնածառ շինէ», մտածում էր Ար-  
 տաշը. բայց խեղճը սիրտ չէր անում խնդրելու,  
 քանի որ հայրն էլ տանն էր. որովհետև տես-  
 նում էր, որ նա նեղացել էր իւր ուշանալուց . . . :  
 Արը ընթրիքը վերջացաւ, Արտաշը յայտնեց  
 մօրը իւր խնդիրը. բայց նա պատասխանեց, թէ՛  
 չէ կարող տօնածառ շինել, թէ՛ ոչ ինքը փող  
 ունի, ոչ հայրը. և վերջապէս այն էլ ասաց, որ  
 իրանց պէս աղքատ մարդիկ չեն էլ կարող  
 մտրոփն անց կացնել այդպիսի բաներ . . . :

Արտաշը չախ՝ քաշեց և էլ չխնդրեց ու  
 նորից մտածմունքի մէջ ընկաւ . . . : Նա մտա-

ծում էր, թէ ամէն մարդ էլ հօ տօնածառ չէ  
 ունենում, ամէն մարդ էլ հօ չէ կարող այնքան  
 ծախս անել նորա վերայ, որքան ծախս է արուած  
 երկրորդ յարկի տօնածառի վերայ . . . : «Թէ-  
 կուզ մի շատ փոքրիկ տօնածառ ունենայի, էլի  
 ինձ բաւական էր», շնչալով ասաց ինքն իրան  
 Արտաշը. բայց նորա ասածը ոչոք չլսեց . . . :

Արը մանուկը անկողին մտաւ, երկար ժա-  
 մանակ չէր կարողանում քնել. իւր տեսած հիա-  
 նալի տօնածառը միշտ աչքի առաջն էր գա-  
 լիս . . . : — «Աս ինքս ինձ համար մի տօնածառ  
 կը շինեմ», ասաց իւր մէջ մանուկը և այս  
 վճռողական մտքով հանգիստ քուն մտաւ . . . :

Աղքատ անակում էլ ձայն-ձպտուն չէր լսու-  
 ւում. լամպարը հանդցրին, հայրն ու մայրը ար-  
 դէն քնած էին. միայն ժամանակ առ ժամա-  
 նակ լսում էր Արտաշի ծծկեր եղջօր լացի  
 ձայնը, որին նա սաստիկ սիրում էր և, որ շատ  
 անգամ իւր ճշոցով չէր թողնում նորան քնել . . . :

Դ.

Առաւօտը, երբ Արտաշը զարթեց, մտակայ  
 եկեղեցու զանգերը խփեցին, և սուրբերի պատ-

կերների առաջը արդէն մոմ էր վառուում: Այդ օրը Քրիստոսի Ծննդեան օրն էր, և մանուկը շտապում էր շուտով հագնուելու, որ հօր հետ պատարագի գնար: Ակեղեցի գնալիս, երբ նա անցնում էր փողոցներովը, տեսաւ, որ այն բոլոր մարդիկը, որոնք ճանապարհին պատահում էին իրան՝ ամէնքն էլ հանդիսաւոր օրուայ շորեր էին հագել. իսկ իւր վերայ էլի այն ամարային հին վերարկուն էր և էլի այն գլխարկը, որի միայն պատուուած կտորը մայրը կարել կպցրել էր: Նայում էր մանուկը անցաւորներին և մտածում էր. «Ինչով պէտք է հայրիկը ինձ համար նոր շոր առնէր. չէ՞ որ շորը տօնածառից թանգ է»: Այլ խորը մտածելով իւր աղքատութեան վերայ՝ Արտաշը չեմացաւ էլ, թէ ինչպէս հասան եկեղեցու դուռը:

Հայրը կանգնեց մի կողմում և ջերմեռանդութեամբ աղօթք էր անում: Նորա հագի շորը մի՞ հասարակ օձիբաւոր մաշուած ու վերջին թելը հասած վերարկու էր: Այդ ժամանակը մի լաւ հագնուած ու կոկուած երիտասարդ, որ կանգնած էր նորա կողքին՝ արհամարհանքով նայեց նորա աղքատիկ հագուստի վերայ: Արտաշը նկատեց այս արհամարհական նայուածքը և նայեց իւր հին վերարկուի վերայ: Արար-

կուն թէև մաշուած էր, բայց բաւական մաքուր էր. բոլոր կոճակները տեղն էին, բծերը հանտուած, կոճկատեղերը մաքրած, արմունկի վերայի պատուուած տեղը կարուած . . . : Ինչ լուսն ու մութը նոր էր բաժանուել և Արտաշն էլ դեռ ևս քնած էր, որ նորա բարի ու հոգատար մայրը հոգս էր քաշել այս ամէն բանի վերայ:

Արտաշն էլ ուրիշների պէս խաչակնքում էր երեսն ու աղօթում, և մէկ իւր վերայ նայելով, մէկ ուրիշների վերայ՝ միշտ մտածում էր, թէ ինչու մի քանիսը այսպէս խեղճ են, իսկ միւսները՝ այնպէս հարուստ: Ինչու ոմանք կարողանում են գեղեցիկ տօնածառեր շինել. իսկ ոմանք մի փոքրիկ տօնածառ էլ չունեն . . . :

Նա չէր կարողանում վճռել այս դժուար խնդիրը: Այդ ժամանակը նա միտքը բերեց իւր հօր ասածը, թէ՛ խեղճ մարդը շատ պէտք է աշխատի, շատ պէտք է սովորի, որ հարուստ դառնայ, և թէ՛ առանց ուսում առնելու՝ ինչքան էլ մարդ չարչարուի, էլի նեղութիւնից չէ կարող աչք բաց անել:— «Այս էլ կ'աշխատեմ, որքան կարելի է, որ աւելի լաւ լինեմ և աւելի շատ բան սովորեմ», մտածեց Արտաշը և ծունկ չորեց, որովհետև տեսաւ, որ իւր հայրը չորած աղօթում է . . . :

Հէնց որ նորա տուն վերադարձան, Արտաշն իսկոյն սկսեց իւր համար մի տօնաձառ շինել: Բակումը գտաւ մի հին ցախաւելի ճիւղոտ, որի վերայ մի քանի ոստ ու ճղնիկ կար: Անոյ այդ ճիւղոտը նա խրեց մի՛ հողով լցրած ծաղկամանի մէջ, որի մէջ ծաղիկ չկար և սկսեց մտածել, թէ ինչով զարդարէ այս ճիւղոտը, — և հնարքը գտաւ . . . : Նա իւր մօրից դերձան խնդրեց, հաւաքեց իւր բոլոր հին խաղալիկները, կտրտեց թղթից՝ տիկիներ, փոքրիկ ձիաներ, զանազան աստղեր, քսեց նոցա վերայ այն դեղեց, որ հայրը ընծայել էր իրան իւր տօնախումբութեան օրը, և այս ամէնը կախ արեց իւր տօնաձառի ճիւղերից: Մայրը տեսնելով իւր երեխայի չարչարուիլը՝ խղճաց նորա վերայ և երեք կոպէկ տուեց նորան, որ իւր համար քաղցրեղէն գնէ: Հարուստները հարիւր ուրբու վերայ այնքան չեն ուրախանում, որքան Արտաշը ուրախացաւ այս երեք կոպէկի վերայ, և ուրախ ուրախ վազեց դէպի խանութը . . . : Բայց մեծ տօնի պատճառով բոլոր խանութները փակուած էին: Մի ամբողջ ժամ վազվզեց լուց յետոյ՝ այն էլ այնպիսի սաստիկ ցրտումը, որ մարդու թուքը տեղնիտեղը սառեցնում էր, Արտաշը վերջապէս գտաւ մի տեղ մի

քաղցրավաճառ, որ մի տեփուրի վերայ հալուայ, նուշ և շաքարէ ընկոյզ էր ծախում: Թանգ են այս քաղցրեղէնները. և ի՛նչ կը տան երեք կոպէկի: Բայց նորա բաղդից, ծախողը բարի քաղցրավաճառներից էր. թէպէտ բարի քաղցրավաճառը մոմով փնտռես՝ չես գտնի: Սա նկատեց, ինչպէս երեխայի աչքերը վառուեցան իւր ապրանքը տեսնելիս, նայեց նորա աղքատիկ վերարկուի և երեք կոպէկի վերայ, միտքը բերեց, որ այն օրը մեծ տօն էր, և՛ ինչքան քաղցրեղէն որ երեք կոպէկի պէտք է տար, այս խեղճ երեխային երեք նորա չափ տուեց:

1007  
32926

Այն գիշերը Արտաշն տօնաձառն էլ վառում էր: Նա լուսաւորեց այն իւր մօր տուած փոքրիկ կիսայրեալ մոմերով: Պտտում էր Արտաշը իւր ճիւղոտի շուրջը, որ ինչով ասես՝ զարդարել էր: Իսկ նորա մայրը հեռուից տրրոմութեամբ նայում էր նորան և լաց էր լինում: Նորա տրտմութեան պատճառն այն էր, թէ ինչու իրանք այնքան խեղճ էին, և թէ ինչու նա չպէտք է կարողանայ աւելի շատ ուրախացնել իւր սիրելի զաւակին, որի համար նա պատրաստ էր մինչ անգամ՝ մեռնելու:

Ինչպէս երևում էր, փոքրիկ կիսայրեալ մոմերը շուտով պէտք է այրուէին պրծնէին, այն

ինչ Արտաշը սաստիկ ցանկանում էր, որ տեղի երկար շարունակուէր իւր հանդէտը: Մայց վերջապէս նա վճուեց, որ հանգցնէ մոմերը և թողնէ միայն մէկը և յետոյ, երբ այն էլ բոլորովին կ'այրուի, միւսներն էլ մէկը միւսի ետեւից վառէ, և ոչ թէ բոլորը միասին: Հէնց այդպէս էլ արեց. և համարեա՛ մի ամբողջ ժամ երեխան անհանգստութեամբ պտտում էր իւր տոնածառի շուրջը, ուրախ ու գոհ. և այլ ևս չէր մտածում այն տոնածառի վերայ, որ տեսել էր երկրորդ յարկի մեծ ապակիների ետեւ:

Ե.

Երկրորդ յարկում մանուկները երկար ժամանակ քնած էին իրանց հանգիսից յետոյ. պատարագն էլ աւարտուեցաւ, դեռ էլի քնած էին. որովհետև նոքա շատ երկար մնացին դահլիճում, իրանց հիւրերի հետ: Երբ երեխաները, այն մեծ ու գեղեցիկ տոնածառի տէրերը ճաշքուն տալուց յետոյ ներս մտան դահլիճը, տեսան որ նախընթաց գիշերուայ շքեղ տոնածառը տխուր տրտում կանգնած էր անկիւնում և բաւական ցաւալի տեսք ուներ. գոյնզգոյն լապտերի մոմը, որ վարդարում էր տոնածառի

կատարը, մինչև կէտը վառուել էր, ծառի տերևներից շատերը խանձուել էին. իսկ բազմաթիւ խաղալիկներից ու քաղցրեղէններից միայն կարմիր, կապոյտ ու կանաչ ժապաւէններն էին մնացել ու մի քանի ընկոյզ և շաքարեղէն, որոնց ցած բերելը դժուար էր:

Մայց մեծ ձին, որ ամէնրի հետաքրքրութիւնը շարժում էր, դեռ էլի մէն—մէնակ կանդնած էր իւր բարձր տեղում և ստիպում էր երեխաներին, որ մտաբերեն երեկուայ հանելուկը, որ ոչ ոք չկարողացաւ լուծել: Անհամբերութիւնից ու հետաքրքրութիւնից տաք ու հով առնելով՝ երեխաները վազեցին իրանց հօր առանձնատենեակը և աղաչանքով ու պաղատանքով խնդրեցին, որ բացատրէ իրանց այն հանելուկի միտքը: Մայց որովհետև նոցա հայրը շտապում էր տեսութեան գնալու իւր ծանօթներին և մի կողմից էլ ցանկանում էր ազատուիլ այդ ձանձրացնող երեխաներից, այս պատճառով նոցա կրկին տարաւ դահլիճը և կանգնեցնելով ամէնրին այն մեծ հայելու դիմացը, որի մէջ անդրադառնում էր նախընթաց գիշերուայ տոնածառը, մատով ցոյց տուեց և հարցրեց. «Քանի՞ տոնածառ ենք տեսնում այս դահլիճումը»:

— «Երկու, երկու, երկու», ուրախացած ձայն տուին երեխաները. բայց հայրը բարկացկոտ ու ծաղրալի դէմքով մեծ ձին տարաւ իւր առանձնասենեակը...:

— Ի՞նչ հասարակ հանելուկ էր, ասաց երեխաներից մեծը:— Ի՞նչպէս մենք երեկ չկարողացանք լուծել...:

— Այս հայելու մասին ամենեւին չմտածեցի էլ. այլ միշտ նայում էի մեր տօնածառի վերայ և միայն այն էի տեսնում. այն պատճառով էլ պատասխանեցի. «Մէկ, մէկ, մէկ», աւելացրեց երկրորդը, որ մի եօթ-տարեկան տղայ էր:

— Իսկ ես ո՞չ մի բանի վերայ չմտածեցի, այլ միայն այն աղաղակեցի, ինչ որ աղաղակում էին ուրիշները, ասաց մի փոքրիկ ու սիրուն աղջիկ, որ երկու մեծ եղբայրների քոյրիկն էր:

Այս միջոցին ներս մտաւ դահլիճը նոցա մայրը: Նա հագել էր մի շքեղ շքազգեստ՝ ահագին պոչով (շէյֆ), որ թրև էր դալիս փայլուն ու կոկ տախտակամասի վերայ, տարածելով բոլոր սենեակներում իւր խշխշալու ձայնը: Երեխաները վազեցին նորա դէմը և պատմեցին, թէ ինչպէս պէտք էր լուծել հանելուկը: «Ի՞նչ հասարակ բան է. չարժէր մինչ անգամ, որ մարդ նեղութիւն կրէր լուծելու»,

ասացին նորա, նեղանալով այն բանից, թէ ինչու չկարողացան ստանալ ամենալաւ ընծան:

— «Հիմա ի՞նչ պէտք է անէք այն ձին: Մի՞թէ հայրիկը մի ամբողջ տարի պէտք է պահի իւր պահարանումը, մինչև միւս տարի այս օրը. և մի՞թէ չե՞ ընծայի մեզնից մէկն ու մէկիս մեր տօնախմբութեան օրը», հարցնում էին մանուկները...:

— Ո՛չ չի ընծայի, այդ անիրաւութիւն կը լինի, պատասխանեց մայրը: Բայց ահա թէ ինչ կ'անենք ձին. դուք բաւական խաղալիկ ունէք. բայց կան այնպիսի խեղճ երեխաներ, որոնք ոչինչ չունեն: Երբ դուք օրիորդ Հայկանուշի հետ գնաք զբօսնելու, ինչ խեղճ երեխայի որ ամենից առաջ պատասէք, կանչեցէք և ձեր ընծան նորան տուէք:

Մանուկները ուրախացան, երբ լսեցին իրանց մօր այս լաւ մտադրութիւնը. որովհետև նորա ժլատ ու չար երեխաներ չէին: Նորա միայն այն էին ուզում իմանալ, թէ ո՞վ պէտք է լինի այն խեղճ տղան, որ ամենից առաջ պէտք է պատասի իրանց...:

2.

Հետեւեալ առաւօտը շատ գեղեցիկ օր լուսացաւ, և մանուկները իրանց դաստիարակութեամբ հետ դուրս գնացին զբօսնելու: 'Նորա նոր էին դուրս եկել իրանց դռնից և ահա տեսան մի տղայ, որ կանգնել էր դիմացի մայթի վերայ և նայում էր նոցա տան լուսամուտներովը...:

— Ինչի՞ն ես նայում, հարցրեց նորան զբնասարանը կոշտութեամբ:

— Ահա այնտեղ, այն լուսամուտների ետևը երեկ չէ, մէկէլ օրը վառուում էր մի տօնածառ. ես ինքս տեսայ այն տօնածառը. բայց հիմա ոչինչ չէ երևում... պատասխանեց երեխան:

Այդ մանուկները լսեցին այս խօսքերը, ուրախութեամբ վազեցին տղայի մօտ և սկսեցին հարց ու փորձ անել նորան իրանց տօնածառի մասին. իսկ յետոյ նորան իրանց տունը կանչեցին: Արտաշը քաշուում էր և սիրտ չէր անում գնալու. բայց երբ խոստացան, որ մի բան կ'ընծայեն նորան՝ գնաց: 'Նորա խեղճ երեխային ներս տարան զահլիճը և ցոյց տուին նորան տօնածառը...: Բայց տօնածառը այնքան մեծ երևեցաւ նորա աչքումը, որ նա առանց մտածելու բացազանչեց ուրախութիւնից: Այս մի-

ջոցին երեխաների հայրը վերադարձաւ կառքով. և երբ մանուկները ասացին նորան, որ ցանկանում են ձին ընծայել այն խեղճ տղային, որ տօնածառ չունենալու պատճառով ցախաւելի ճիպոտն էր տօնածառ շինել իւր համար՝ նա շատ ուրախացաւ այս բարի մտադրութեան վերայ: Բայց ընծան տալուց առաջ կամեցաւ փորձել ու իմանալ, թէ որքան սրամիտ ու հնարագէտ է այն երեխան: Այս պատճառով նա մի քիչ հեռացրեց նորան տօնածառից, քաշեց մի կողմը և հարցրեց. «Ասա տեսնեմ. այս զահլիճում մենք քանի՞ տօնածառ ենք տեսնում»: Արեխան չորս կողմը նայեց, աչքերը անկեց տօնածառի վերայ, որ թէպէտ շատ մեծ էր, բայց զրեթէ ամբողջութեամբ անդրադառնում էր հայերու մէջը, և պատասխանեց. «Այս այստեղ տեսնում եմ երկու տօնածառ»: Մանուկները ծափահարեցին, իսկ հայրը գովեց այս անծանօթ երեխային, և մի անգամ էլ յանդիմանելով իւր երեխաներին, դուրս բերեց շարժուող անիւների վերայ կանգնած ձին և տուեց նորան: Արտաշը ուրախութիւնից խելքահան եղաւ և չզիտէր, թէ ինքը որտեղ է, և մի քանի բոպէից յետոյ ծանր ու բարակ վեր առաւ իւր ընծան և քաշ տալով տարաւ դէպի

իրանց տունը, անց կացնելով զլիաւոր փողոցի մի ծայրից մինչև միւսը, և մտաւ մի հեռաւոր ու մութ նեղ փողոց . . . :

Մորանից յետոյ երկրորդ յարկի մանուկները և փոքրիկ աղջկեր միշտ յիշում էին, որ աշխարհիս երեսին հարուստ երեխաներ էլ կան խեղճեր էլ. և որ խեղճերը փողոցից զուարճանալով հարուստների տոնածառովը՝ տանում են իրանց սրտումը այն տոնածառից մի տխուր յիշատակ, որ այնպէս է անդրադառնում իրանց մանկական հոգու մէջ, ինչպէս շքեղ տոնածառը անդրադառնում էր հայելու մէջ . . . :

Եւ խեղճ երեխաները իրանց ցանկութիւնը կատարում են կամ մի հին ցախաւելի անպէտքացած ճիպոտով, կամ մի ճղնիկով, որ կտրել են ձմեռ ժամանակ մերկացած մի ծառից . . . :

Թարգմանչ

Յ. Նազարեանց.

**Մ Ե Ր Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը**

1. ԱՆԵԿԴՕՏԵՆԵՐ Հատոր I. 1876 . . . . .	50 է.
2. ԱՆԵԿԴՕՏԵՆԵՐ Հատոր II. 1877 . . . . .	50 է.
3. ՆԱԻԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ Հատոր I. 1878 . . . . .	50 է.
4. ՊՕԼՈՒԻՄՊԵՐԻԱԼ 1878 . . . . .	20 է.
5. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՅԻԶ Գ. տարի 1881 . . . . .	40 է.
6. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՅԻԶ Գ. տարի 1881 . . . . .	60 է.
7. ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ 1882 . . . . .	20 է.

171 Կարգ. Պիսի Գրքի 2 մասեր  
Գրքի Գրքի Գրքի Գրքի Գրքի  
Սերգեյ Գրքի Գրքի Գրքի Գրքի

1705

0006379

2013  
2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0006379

